

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐ

ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳԻՐ

Կազմվել է՝ համայնքի ղեկավար Է. Խաչատրյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարի 12 -ի թիվ 8 -Ն
որոշմամբ

ՍՈԼԱԿ 2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ	1
2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....	3
2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	3
2.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ	16
2.3. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ	19
2.4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ	19
2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	24
2.6. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ.....	25
3. ՆՊՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ	26
3.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ.....	26
3.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊՏԱԿԸ	26
4. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ	27
5. ՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ	30

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

ՀՀ Կոտայքի մարզի Սուլակ համայնքի 2019-2023 թթ. զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով: ՀԶԾ -ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԾ -ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպության կողմից մշակված և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2014 թվականին հավանության արժանացած «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության» ուղեցույցի մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

Ներկայացվող ՀԶԾ -ն առաջիկա տարիների համար հանդիսանալու է Սուլակ համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶԾ -ի բովանդակությունը պայմանավորված է ՀԶԾ -ի մշակմանը մասնակից համայնքապետարանի աշխատակազմի կողմից կատարված աշխատանքով և առաջարկներով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶԾ -ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքում հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶԾ -ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքը զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: ՀԶԾ -ն մշակվել է մասնակցային եղանակով՝ հաշվի առնելով համայնքի շահագրգիռ բոլոր կողմերի առաջարկությունները: Հարցումների միջոցով վեր են հանվել համայնքի բնակիչներին հուզող խնդիրները, դրանք գնահատվել են և դասակարգվել ըստ առաջնահերթության: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի հետ միասին մշակել է համայնքի 2019-2023թթ. ՀԶԾ -ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2019-2023թթ. ՀԶԾ -ն ներկայացնում է Սուլակ համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական և տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացում: ՀԶԾ -ն ներառում է նաև Սուլակ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Սուլակ համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Սուլակի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ՀԶԾ փաստաթուղթը մշակելիս ուսումնասիրվել են նաև Սոլակ համայնքի նախորդ քառամյա ժամանակաշրջանի զարգացման միտումները և դրանց շարունակականության հավանականությունը:

ՀԶԾ փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶԾ -ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սոլակ գյուղը գտնվում է Հրազդան գետի ափին, մարզկենտրոնից 5 կմ հարավ- արևմուտք: Ունի միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, գրադարան, մսուր մանկապարտեզ, առողջության առաջնային պահպանման կենտրոն: Բնակիչների նախնիները եկել են Մուշից և Ալաշկերտից՝ 1828 թվականին: Գյուղում և շրջակայքում պահպանվել է եկեղեցին՝ Մայրավանք սուրբ Աստվածածինը, որը կառուցվել է 7-րդ դարում, ամրոց, գյուղատնիկներ, գերեզմանոց՝ 13-19-րդ դարերի խաչքարերով: Բոլոր հիմքերը կան կարծելու, որ գյուղի անունը Ամասիա գահակալի Յոլակ որդու հնչյունափոխված տարբերակն է: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, հացահատիկային կուլտուրաների մշակմամբ:

2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սոլակի համայնքը գտնվում է մարզի արևմտյան մասում:

Համայնքը հյուսիս արևելքից սահմանակից է անտառային ֆոնդի հողերին, հյուսիս արևելքից՝ Բաղսի համայնքին, հարավից՝ մարզի պահուստային հողերին, հարավ-արևմուտքից՝ Բջնի համայնքին:

Համայնքի հեռավորությունը մարզկենտրոն ք. Հրազդանից 14 կմ է, կենտրոնի հեռավորությունը Երևանից 41 կմ է:

Համայնքի վարչական տարածքը 3842 հա է:

Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից 1600-ից 1700 մ է:

Կլիման չափավոր ցամաքային է, տարեկան միջին ջերմաստիճանը՝ 5,6-6 աստիճան, տեղումների քանակը 600-800 մմ:

Ձմեռը նրկարատն է, կայուն ձյունածածկույթով, ամառը՝ մեղմ և զով:

Տարածքում տիրապետում են տափաստանային բուսածածկույթով լեռնային սևահողերը: Գյուղից 2 կմ հեռավորության վրա անցնում է Երևան- Սևան ավտոմայրուղին, իսկ գյուղամիջով՝ նրկաթուղին:

**Աղյուսակ 1. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները
(01.01.2019թ. դրությամբ)**

հհ	Ցուցանիշները	Թվաքանակը
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	2456
	Տղամարդիկ	1211
	Կանայք	1245
	0-4 տարեկան	152
	5-6 տարեկան	65
	7-10 տարեկան	116
	11-14 տարեկան	105
	15-17 տարեկան	72
	18-22 տարեկան	126
	23-45 տարեկան	871
	46-62 տարեկան	684
	63 և բարձր տարիքի	265
2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	353
	Տարիքային և աշխատանքային	357
3.	Փախստականներ	0
4.	Միակողմանի ծնողագուրկ երեխաներ	8
5.	Երկկողմանի ծնողագուրկ երեխաներ	0
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	0
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	10
8.	Հաշմանդամներ, այդ թվում՝	46
	Մանկուց հաշմանդամներ	7
9.	Աշխատունակներ	1700
10.	Զբաղվածներ	1430
11.	Գործազուրկներ	200
13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	63
14.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	0
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքներ իրենց, այդ թվում՝	10
	Անօթևան ընտանիքներ	0
16.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	10
17.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	120
18.	Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	180

Սույլակ համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 5 անդամներով:

Սույլակ համայնքի աշխատակազմը բաղկացած է 16 աշխատակիցներից:

Համայնքապետարանն ունի վարչական շենք, որը գտնվում է Սույլակ համայնքի 4-րդ թաղամաս 1 հասցեում: Շենքի ընդհանուր վիճակը բավարար է, աշխատակազմի համար պայմանները լավ են, կահավորանքի մի մասը նորացված է, մի մասը դեռևս 1990-ական թվականների է:

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 52 որոշմամբ:


Աղյուսակ 2. Սուղակի համայնքապետարանի աշխատակազմը

Հ/հ	Հաստիքի անվանումը	Պաշտոնի ծածկագիր	հաստիքային միավոր	Պաշտոնային և դրույքաչափ, ՀՀդրամ	Հավելում	Հավելված ար	Աշխատավարձի չափը, ՀՀդրամ
1	2	3	4	5	6	7	8
	Քաղաքական պաշտոններ						
1	Համայնքի ղեկավար		1	300000			300000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ		1	180000			180000
	Հայեցողական պաշտոններ						
	Համայնքային ծառայության հաստիքներ						
1	Աշխատակազմի քարտուղար	1.2-1	1	146000		7300	153300
2	առաջատար մասնագետ	3.1-1	1	139000		6950	145950
3	առաջատար մասնագետ	3.1-3	1	139000			139000
4	1-ին կարգի մասնագետ	3.2-2	1	122000			122000
5	1-ին կարգի մասնագետ	3.2-3	1	122000		6100	128100
6	1-րդ կարգի մասնագետ	3.2-6	1	122000		6100	128100
	Տեխնիկական սպասարկման անձնակազմ						
1	օպերատոր		1	110000			110000
2	վարորդ		1	85000			85000
3	Տեխնիկական աշխատող		1	85000			85000
4	մեխանիզատոր		1	85000			85000
5	անասնաբույժ		0,5	85000			42500

6	բանվոր		2	85000			170000
7	պահակ		1	85000			85000
	ԸՆԴԱՄԵՆԸ		16			26450	

Գծապատկերում ներկայացված է Սոլակի համայնքի կառավարման կազմակերպական կառուցվածքը

ՍՈԼԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ



Համայնքային ոչ առևտրային 2 կազմակերպությունների (ՀՈԱԿ) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 52 որոշմամբ (աղյուսակներ 3,4)

Աղյուսակ 3. Կոտայքի մարզի Սոլակի նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	6	7	8	9	10
1	Կոտայքի մարզի Սոլակ համայնքի մանկապարտեզ	տնօրեն		1	110000			110000
2		մեթոդիստ		0,5	95000			47500
3		տնտեսվար		0,5	85000			42500
4		հաշվապահ		0,5	85000			42500
5		դաստիարակ		3	95000			285000
6		դաստիարակի օգնական		3	85000			255000
7		երաժշտության դաստիարակ		0,75	95000			71250
8		բուժքույր		0,75	85000			63750
9		խոհարար		1	85000			85000
10		խոհարարի օգնական		0,5	85000			42500
11		ֆիզկուլտուրայի հրահանգիչ		0,5	95000			47500

Աղյուսակ 4. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնքի Պերճ Բաղայանի անվան մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	6	7	8	9	10
1	Կոտայքի մարզի Սոլակ համայնքի	տնօրեն		1	120000			120000

	Պերճ Բաղայանի անվան մշակույթի տուն							
2		գեղմասվար		0,5	95000			47500
3		գրադարանավար		0,5	90000			45000
4		հաշվապահ		0,5	90000			45000
5		դասատու		2	90000			180000
6		տեխնիկական աշխատող	Տեխնիկակ ան սպասարկմ ան	1	85000			85000
7		հյուան	Տեխնիկակ ան սպասարկմ ան	0,5	85000			42500
8		Էլեկտրիկ	տեխնիկակ ան սպասարկմ ան	1	85000			85000

2.1. 1. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում աղբը տեղափոխվում է «Բարմաք» ՍՊԸ-ի կադմից, աղբահանությունը կատարվում է շաբաթական մեկ անգամ՝ շրջիկ մեքենայի միջոցով: Փողոցներում աղբամաններ տեղադրված չեն և բնակիչներն աղբը դնում են մայթերին, որտեղից աղբահավաք մեքենան հավաքում է:

Համայնքի տարածքում գիշերային (արտաքին) լուսավորության ցանցը ապահովում է համայնքի անհրաժեշտ գիշերային լուսավորության ծածկույթի 85 %-ը: Համայնքում լուսավորության ցանցը կառուցված է մասամբ և անհրաժեշտ է կտրուկ ընդլայնել լուսավորության ցանցը:

Համայնքը ունի օրական 24 ժամյա ջրամատակարարում: Խողովակաշարի ներքին և արտաքին ցանցերը լրիվ նորացված են:

Համայնքում առկա է գերեզմանատների ցանկապատման կամ եղած ցանկապատերի թարմացման խնդիր: Համայնքում տնամերձ հողամասերի միջին չափը 1000 քմ է:

Համայնքը գազաֆիկացված է:

2.1.2. ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում բնակելի տները հիմնականում առանձնատներ են, որոնց թիվը կազմում է 537, վիճակը բավարար:

Համայնքում կա մեկ բազմաբնակարան շենք, վիճակը բավարար:

2.1.3. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 4272,48 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 3572,48 հա, բնակավայրերի հողերը՝ 215,56 հա, արտադրական նշանակության հողերը՝ 0,05 հա, էներգետիկայի, տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակայության հողերը՝ 28,42 հա, անտառային հողերը՝ 410,31 հա, հատուկ պահպանության հողերը՝ 21,56 հա, հատուկ նշանակության հողերը՝ 31,41 հա և ջրային հողերը՝ 8,41 հա:

1991 թվականին հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհման ժամանակ համայնքում սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը կազմում է 1,31 հա:

2.1.4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում ցանվում են հացահատիկային մշակաբույսեր՝ ցորեն, գարի, հաճար, ոսպ և այլ կուլտուրաներ: Սակայն հողատարածքների ջրովի չլինելու պատճառով համայնքի բնակիչները մեծ եկամուտներ չեն ստանում: Հողատեսքերի դիրքադրությունը միանգամայն բարենպաստ է հացահատիկային կուլտուրաների արտադրության ու անասնապահության համար: Հացահատիկային կուլտուրաների արտադրությունն ու անասնապահությունը հանդիսանում են Մոլլակ համայնքի տնտեսական զարգացման կանխորոշող ոլորտ: Սակայն այս երկու ոլորտները ներկայումս ունեն միջին զարգացվածության տեմպ, որը պայմանավորված է ոլորտների ցածր կապիտալացման աստիճանով ու վերամշակման տեխնոլոգիաների բացակայությամբ:

Համայնքի բնակիչները զբաղվում են նաև անասնապահությամբ, սակայն խոշոր ֆերմերային տնտեսություններ չկա: Հիմնականում յուրաքանչյուր տնտեսություն իր արտադրանքը սպառում է իր տնտեսության ներսում:

2016 թվականին «Գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից կառուցվել է արոտավայրերի ջրաբիացման ջրագիծ և անասունների ջրի խմոցներ:

Նոր ստեղծված «Սոլակ համայնքի արոտագտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի կողմից ձեռք է բերվել նաև նոր գյուղատնտեսական տեխնիկա:

Համայնքի բնակիչների մի մասը զբաղվում է մեղվաբուծությամբ, սակայն տարիների կտրվածքով մեղվի համար եղանակային պայմանները լավ են լինում մեկընդմեջ:

Համայնքի բնակիչները իրենց տնամերձ հաղամասերում աճեցնում են բանջարաբուստանային կուլտուրաներ և բազմատեսակ պտուղներ, սակայն ոռոգվում է համայնքի ոռոգելի տարածքի ընդամենը 30%-ը՝ պոմպակայանի միջոցով: Ոռոգելի տարածքի 70%-ը չի ոռոգվում ջրի սակավության պատճառով:

2.1.5. ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում շրջակա բնական միջավայրի պահպանության առումով առաջնային խնդիր է համայնքի սանմաքրումը:

- ավելացնել գյուղի կանաչապատ տարածքները,
- կառուցել կենտրոնացված աղբավայր,
- աղբի նախնական տեսակավորման համար փողոցներում տեղադրել աղբամաններ,
- համայնքի փողոցներում իրականացնել ծառատունկ,
- ավելացնել համայնքի կանաչապատ և ծաղկապատ տարածքները,
- ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող սեմինարների, դասընթացների, տեսագովազդների, ցուցանակների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

2.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

2.2.1. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԺԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Սոլակ համայնքի ներհամայնքային ճանապարհների և փողոցների որոշ մասն անբարեկարգ է: Գնացարհները հիմնականում ասֆալտապատ և խճապատ են:

Համայնքում գործում է Սոլակ-Հրազդան, Սոլակ-Չարենցավան տրանսպորտային միջոցներ, որոնց թիվը բավականացնում է մարդկանց բնականոն տեղաշարժին, տեղադրված է 5 կանգառ:

2.2.2. ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սոլակ համայնքում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի կողմից: Համայնքում գործում են սննդի խանութներ, հանրային սննդի սպասարկման օբյեկտներ, հյուրանոցային համալիր, շինանյութի խանութ, ավտոպահեստամասերի խանութ, ավտոսպասարկման կետ:

Համայնքում չկան գործող ոչ կառավարական կազմակերպություններ (ՀԿ-ներ, հիմնադրամներ, քաղաքական կուսակցություններ և այլն): Համայնքում 2016 թվականից գործում է «Սոլակի արոտագտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվը, որը համալրված լինելով որոշակի գյուղտեխնիկայով, մատուցում է գյուղատնտեսական աշխատանքների ծառայություններ:

Համայնքի տարածքում առևտրային և այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունների տվյալները (նաև նախկինում աշխատած) ներկայացված են **հավելված 1-ում** :

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Արտադրական կազմակերպություններ	Առևտրային կազմակերպություններ	Ծառայություններ մատուցող կազմակերպություններ
1.	Սոլակ	✓ 1(մեկ) զտարան	✓ 15 (տասնհինգ) սննդի և տնտեսական ապրանքների խանութներ ու վաճառակետեր ✓ 1 (մեկ) հեղուկ վառելիքի վաճառակետ ✓ 1 (մեկ) շինանյութի խանութ ✓ 1(մեկ) ավտոպահեստամասի խանութ	✓ 1 (մեկ) հյուրանոցային համալիր

2.2.3. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Սոլակ համայնքում գործում է հանրակրթական միջնակարգ դպրոց 1 հատ, որը հիմնանորոգվել է:

Համայնքում գործում է 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն: Համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունը աշխատում է 7 ժամյա աշխատանքային ռեժիմով, տրվում է երեք անգամյա սնունդ: Ավագանու որոշմամբ ծնողական վճարի չափը սահմանված է օրը 200 (երկու հարյուր) դրամ:

Ներկայացված է վերը նշված ուսումնական հաստատություններում աշխատողների և ուսուցանվող երեխաների վերաբերյալ տեղեկատվություն:

Աղյուսակ 5. Սոլակ համայնքի հանրակրթական դպրոցի, նախադպրոցական ուսումնական հաստատության վերաբերյալ ցուցանիշները

Հ/հ	Ցուցանիշները	Թվաքանակի
1.	Դպրոցում աշխատողների թիվը, որից՝	45
	Մանկավարժներ	32
2.	Աշակերտների թիվը	232
3.	Նախադպրոցական ուսումնական հաստատությունում աշխատողների թիվը	18
4.	Նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախող երեխաների թիվը	89

2.2.4. ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքում գործում է մշակույթի տուն իր խմբակներով և պարի խմբով:

Համայնքի մշակույթի տանը գոյություն ունեն գործող գրադարան, գրադարան է գործում նաև միջնակարգ դպրոցում: Ցավոք, համայնքաբնակների կողմից առկա է գրքի հանդեպ ուշադրության և հետաքրքրվածության պակաս:

2.2.5. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքում աշխատում է Առողջության առաջնային պահպանության կենտրոն (ԱԱՊԿ), որը արդիական բժշկական սարքերով համալրման, կադրերի վերապատրաստման կարիք ունի: ԱԱՊԿ-ն իրականացնում է հիմնականում առաջին բուժօգնության ծառայություններ: Տեղի ունեցող հիմնական դեպքերի ժամանակ շտապ օգնությունը հասնում է Հրագդան քաղաքից (համայնքի բնակավայրերի հեռավորությունը Հրագդանից 14 կմ է):

Համայնքապետարանը կազմակերպում և անց է կացնում ներհամայնքային նարդու մրցումներ: Քայլեր են ձեռնարկվում համայնքում տարաբնույթ սպորտային խմբակներ կազմակերպելու ուղղությամբ: Սպորտը առավել զարգացնելու համար համայնքին անհրաժեշտ է ունենալ մեծ սպորտային դահլիճ: Համայնքի տարածքում սպորտդահլիճ առկա է միայն դպրոցում:

2.2.6. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Քանի որ համայնքի տարածքում չկան գործող մեծ գործարաններ կամ արտադրամասեր, ուստի բնակչության աշխատանքի տեղավորվելու և աշխատելու հույսը մնում է միայն՝ համայնքապետարանում, ՀՈԱԿ-ներում, դպրոցներում, հանրային սնունդ սպասարկող հիմնարկներում:

Համայնքի ծնողագուրկ, հաշմանդամ և սոցիալապես շատ ծանր վիճակում գտնվող սոցիալապես անապահով ընտանիքներին համայնքապետարանը հնարավորությունների շրջանակներում օգնություն է ցուցաբերում:

Ներկայացված են համայնքում եղած աշխատունակ և գործազուրկ մարդկանց, նպաստառու ընտանիքների, հաշմանդամների և ծնողագուրկ ու հաշմանդամ երեխաների վերաբերյալ ցուցանիշներ:

Աղյուսակ 6. Սոլակ համայնքի աշխատունակների և գործազուրկների, նպաստառու ընտանիքների, հաշմանդամների և ծնողագուրկ ու հաշմանդամ երեխաների վերաբերյալ ցուցանիշները

Հ/հ	Ցուցանիշները	Թվաքանակը
1.	Միակողմանի ծնողագուրկ երեխաներ	8
2.	Երկկողմանի ծնողագուրկ երեխաներ	0
3.	Հաշմանդամներ, այդ թվում՝	46
4.	Մանկուց հաշմանդամներ	7
5.	Աշխատունակներ	1700
6.	Զբաղվածներ	1430
7.	Գործազուրկներ	200
8.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	63

2.2.7. ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ: Համայնքային իշխանության ենթակառուցվածքների ներգրավմանը զուգահեռ, քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են համայնքային այլ պատկանելիության, մասնավոր հատվածի մի շարք կազմակերպություններ (կապի, տրանսպորտի, բժշկական, ծառայությունների և այլ ոլորտներից), առանց որոնց անհնար է քաղպաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:

Սույակ համայնքի քաղպաշտպանության շտաբի պետը համարվում է համայնքապետը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են քաղպաշտպանության շտաբի առանձին ծառայությունները՝ ծառայությունների պետերի համակարգմամբ:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացման գործում բնակչության էվակուացման համար մշակված է պլան, համապատասխան որի, բնակելի, հասարակական շենքերի, մյուս շենքերի ու շինությունների համար նախատեսված է հարմարավետ մոտեցումներով աշխատանքների կատարման կոմունիկացիոն սխեմաներ: Համայնքում եղած թաքստոցները հաշվառված են համայնքապետարանի կողմից: Անհրաժեշտություն կա թաքստոցները ավելացնել բնակչության թվին համապատասխան:

Համայնքի իրավիճակի բնութագրման և գնահատման ընդհանուր և ոլորտային հիմնական ցուցանիշները ներկայացված են **հավելված 2**-ում:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հ/հ	Ցուցանիշներ	Զափիմ իավոր	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2022թ. կանխ.	2023թ. կանխ.
1.	Համայնքի վարչական տարածքը	հա	4272,48	4272,48	4272,48	4272,48	4272,48	4272,48	4272,48
2.	Բնակչության թիվը	մարդ	2494	2480	2473	2500	2520	2530	2560
3.	Բնակելի շենքերի ընդհանուր թիվը	շենք	1	1	1	1	1	1	1
	Անհատական բնակելի տների թիվը	տուն	536	536	536	536	536	536	536
	Անհատական բնակելի տների մակերեսը	հազ.քմ	43830,6	43830,6	43830,6	43830,6	43830,6	43830,6	43830,6
4.	Վթարային շենքերի թիվը	շենք	0	0	0	0	0	0	0
	Աղբավայրի առկայությունը և զբաղեցրած տարածքը	հազ.քմ	0	0	0	0	0	0	0
11.	Ռոտզման ցանցի երկարությունը	կմ	15	17	18	22	26	26	32
12.	Ռոտզելի տարածքի մակերեսը	հա	45.0	45.0	45.0	45.0	45.0	45.0	45.0
15	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	39.6	39.6	39.6	39.6	39.6	39.6	39.6

16.	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների մակերեսը	հազ.քմ	36,9	36,9	36,9	36,9	36,9	36,9	36,9
17.	Առևտրի և ծառայությունների Օբյեկտների թիվը, այդ թվում՝	հատ	15	15	16	18	19	20	20
	առևտրի Օբյեկտներ	հատ	15	15	15	15	15	15	15
	ժ. 24-ից հետո աշխատող Օբյեկտներ	հատ	0	0	0	0	0	0	0
	Բենզինի լիցքավորման կետեր	հատ	1	1	1	1	1	1	1
22.	Նախադպրոցական հիմնարկների թիվը	հատ	1	1	1	1	1	1	1
	Երեխաների թիվը	մարդ	85	90	95	100	110	120	130
	Խմբերի թիվը	խումբ	3	3	3	3	3	3	3
23.	Հանրակրթական դպրոցների թիվը	հատ	1	1	1	1	1	1	1
	Աշակերտների թիվը	մարդ	232	232	235	240	250	255	260
27.	Մշակույթի տուն	հատ	1	1	1	1	1	1	1
29.	Պոլիկլինիկա-ամբուլատորիաների թիվը	հատ	1	1	1	1	1	1	1
30.	Կենսաթոշակառուների թիվը	մարդ	353	355	360	365	370	375	375
31.	Հաշմանդամների թիվը	մարդ	69	69	69	69	69	69	69
32.	Արտագնա/սեզոնային/ աշխատանքի մեկնողների թիվը	մարդ	150	150	150	150	150	150	150
33.	Գործազուրկների թիվը	մարդ	200	200	200	200	200	200	200
34.	Փախստականների թիվը	մարդ	0	0	0	0	0	0	0
35.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը	ընտ.	63	63	59	56	56	56	56
36.	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային եկամուտը	հազ. դրամ	2.212	2,270	3.0	3.8	4.8	6.0	7.0
37.	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային ծախսը	հազ. դրամ	2.212	2,270	3.0	3.8	4.8	6.0	7.0
38.	Սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների մեջ	%	46.5	61.8	18.9	25.9	24.3	22.9	25.9
39.	Կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը բյուջեի ընդհանուր ծախսերի մեջ	%	23	49	17.3	29.3	32	34.6	40.7
40.	Համայնքի բյուջեի եկամուտների փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ	%	100	100	90-100	90-100	90-100	90-100	90-100
41.	Համայնքի բյուջեի եկամուտների փաստացի կատարումը ճշտված պլանի նկատմամբ	%	100	100	90-100	90-100	90-100	90-100	90-100

42.	Համայնքի բյուջեի ծախսերի փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ	%	95	96	90-100	90-100	90-100	90-100	90-100
43.	Համայնքի բյուջեի ծախսերի փաստացի կատարումը ճշտված պլանի նկատմամբ	%	96	96.5	90-100	90-100	90-100	90-100	90-100
44.	Համայնքի աշխատողների վարձատրության ծախսերի տեսակարար կշիռը բյուջեի ընդհանուր ծախսերի մեջ	%	58	37.7	62.7	53.7	51.4	49.1	44.2

2.3. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

Համայնքի փողոցների լուսավորության ծրագիրը իրականացվում է արդեն մի քանի տարի, սակայն համայնքի բյուջեն չի բավականացրել լիովին ավարտել փողոցների լուսավորության խնդիրը:

2.4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը ձևավորվում են պետական բյուջեից համայնքին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին (աղյուսակ 4):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր գրեթե չեն կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

Աղյուսակ 7. Համայնքի 2019-2023թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2019-2023թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

		հազար դրամ						
Հ/հ	Մուտքերի անվանումը	2017թ. փաստ.	2018թ. փաստ.	2019թ. նախ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2022թ. կանխ.	2023թ. կանխ.
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	62668,1	73841,6	73841,6	75660,9	78455,9	81270,9	84040,9
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵՎԱՍՏՈՒՏՆԵՐ (1+2+3)*	57261,8	57999,6	58741,8	60060,9	61755,5	63470,9	65140,9
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	16576,8	17314,7	17869,9	19180,0	20455,0	21760,0	23020,0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	11014,0	10601,9	10621,9	11630,0	12640,0	13650,0	14700,0
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	550,0	600,0	620,0	630,0	640,0	650,0	700,0
	Հողի հարկ	10764,0	10001,9	10001,9	11000,0	12000,0	13000,0	14000,0

1.2	Գույքային հարկեր այլ գույքից							
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	4812,8	5912,8	6448,0	6650,0	6815,0	7010,0	7120,0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ							
	Տեղական տուրքեր	750,0	800,0	800,0	900,0	1000,0	1100,0	1200,0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ							
	Պետական տուրքեր							
1.5	Այլ հարկային եկամուտներ							
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ							
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ							
2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՂՆԵՐ	36984,6	36984,9	37091,9	37100,9	37200,9	37300,9	37400,9
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ							
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	36984,6	36984,9	37091,9	37100,9	37200,9	37300,9	37400,9
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ							
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ							
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
3	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	3700,0	3700,0	3700,0	3780,0	4100,0	4410,0	4720,0

3.1	Տոկոսներ							
3.2	Շահաբաժիններ							
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	3250,0	2535,0	2535,0	2580,0	2800,0	3000,0	3220,0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	3100,0	2385,0	2385,0	2400,0	2600,0	2800,0	3000,0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ							
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ							
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	150,0	150,0	150,0	180,0	200,0	210,0	220,0
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում							
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ							
3.5	Վարչական գանձումներ	350,0	1065,0	1065,0	1100,0	1200,0	1300,0	1400,0
	Տեղական վճարներ	350,0	1065,0	1065,0	1100,0	1200,0	1300,0	1400,0
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ							
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ							
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից							
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների							

	չկատարման դիմաց գանձվող տույժերից							
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.9	Այլ եկամուտներ*							
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր							
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր							
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ							
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՎՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ (1+2+3+4)	-40111,350	-14369,2	-13600,0	-14000,0	-15000,0	16000,0	17000,0
1	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր	-40111,350	-14369,2	-13600,0	-14000,0	-15000,0	16000,0	17000,0
	Շարժական գույքի իրացումից մուտքեր							
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
2	Պաշարների իրացումից մուտքեր							
3	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր							
4	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
	Հողի իրացումից մուտքեր	-40111,350	-14369,2	-13600,0	-14000,0	-15000,0	16000,0	17000,0
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
III.	ՀԱՄԱՑՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)	1395,115	1472,854	1500,0	1600,0	1700,0	1800,0	1900,0
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)	1395,115	1472,854	1500,0	1600,0	1700,0	1800,0	1900,0
1	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ							
1.1	Արժեթղթեր							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
1.2	Վարկեր							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	Փոխատվություններ							
	-բյուջետային փոխատվությունների ստացում							
	-ստացված փոխատվությունների գումարի մարում							

2	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	1395,115	1472,854	1500,0	1600,0	1700,0	1800,0	1900,0
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն							
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր							
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր							
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում							
2.2	Փոխատվություններ							
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր							
	-փոխատվությունների տրամադրում							
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	1395,115	1472,854	1500,0	1600,0	1700,0	1800,0	1900,0
2.4	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս							
2.5	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս							
2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում							
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը							
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂՔՑՈՒՐՆԵՐ							
1	ՓՈՒՍԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ							
1.1	Արժեթղթեր							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
1.2	Վարկեր							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	Փոխատվություններ							
	-փոխատվությունների ստացում							
	-ստացված փոխատվությունների գումարի մարում							

Աղյուսակ 8. Պարտադիր իրականացվող ծրագրերի ցանկ

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
		ՏԻՄ-երի յիսգորություններ	
1	Սոլակի համայնքապետարան	Կառավարման ապարատի պահպանում	23836,8
2	Սոլակի համայնքապետարան	Բնակչությանը սոցիալական օգնության տրամադրում	3000,0
3	Սոլակի համայնքապետարան	Աղբահավաքման աշխատանքների իրականացում (համայնքի ընդհանուր վարչական տարածքում)	2000,0
4	Սոլակի համայնքապետարան	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	29409,2
5	Սոլակի համայնքապետարան	Ջրահեռացման ցանցի կառուցում	3000,0
6	Սոլակի համայնքապետարան	Համայնքապետարանի գույքի և տեխնիկայի համալրում	4350,0
7	Սոլակի համայնքապետարան	Մանկապարտեզի տարածքի բարեկարգում և կառուցապատում	1000,0
8	Սոլակի համայնքապետարան	Գյուղի գլխավոր հատակագծի մշակում	120,0

2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի իրավիճակի վերլուծության արդյունքում վեր են հանվել մի շարք հիմնահարցեր, որոնք ամփոփ կերպով ներկայացված են ստորև.

- ✓ Կոյուղագծի բացակայությունը
- ✓ Կանաչապատ և ծաղկապատ տարածքների ավելացման, զբոսայգու կառուցման աշխատանքների ավարտին հասցման և բարեկարգման անհրաժեշտություն
- ✓ Համայնքի խնդիրների լուծման գործընթացում բնակչության ներգրավվածության ցածր մակարդակ
- ✓ Կենդանիների մորթի իրականացման տարերայնություն
- ✓ Գյուղմթերքների իրացման դժվարություններ
- ✓ Աղբահանության ոլորտում մատուցվող ծառայությունների ցածր մակարդակ
- ✓ Համայնքում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման անհրաժեշտություն
- ✓ Վարչական նստավայրում շենքային և գույքային անբավարար պայմաններ
